

Հայ գիտնականների դերը տարբեր ազգերի այբուբենների ստեղծման մեջ

Պրոֆ. Գ. Վահանյան

Նյութական և ոչ նյութական ժառանգության բազում հուշարձաններ մատնանշում են տարբեր աղբյուրներ (կամ հենց իրենք են տեղեկատվության կրողը), որոնք վկայում են տարբեր ազգերի գրերի ստեղծման մեջ հայերի (հին հայկական քաղաքակրթության) հիմնարար դերի մասին: Նշենք դրանցից առավել հուշագրավները.

1. Հայկական ժայռապատկերներում առանձնացված **գաղափարագրերը** և **հիերոգլիֆները** հանդիսանում են **հայկական, իեթական, ուրարտական, հնդկական և եգիպտական** գաղափարագրերի և հիերոգլիֆների նախատիպերը և վերջիններիս ծագման աղբյուրը¹:
2. **Տիրը (Տիրասը)** հին հայկական հեթանոս աստվածների պանթեոնում գրի և իմաստության աստվածն է: Ըստ միջնադարյան հայ պատմաբանների՝ որպես նրա որդիներ են նշվում **Ասքանազը** և **Թորգոմը**՝ հայոց տան հիմնադիրները, հին քաղաքակրթության գիտելիքները պահպանողները:
3. Ըստ հունական տվյալների՝ **Կադմոսը** ստեղծել է **փյունիկյան և հունական այբուբենները**: **Կադմոսը** Հայկազունիների լեգենդար արքայատոհմի հիմնադիր **Հայկ Նահապետի** (աստվածաշնչյան և քրիստոնեական ավանդույթի համաձայն՝ աստվածաշնչյան Թորգոմի ժառանգներից մեկի) թոռն է և Արամանյակի որդին:
Հայկ Նահապետն առաջինն էր, ով կառուցեց Գիտելիքի տաճարը (աստծո տունը) և փոխանցեց այն իր թոռանը՝ **Կադմոսին**: **Հայկ Նահապետը**² (Մովսես մարգարեից շատ տարիներ առաջ) ստեղծել է **12 ամսից** բաղկացած

¹ Աղբյուր. <http://www.iatp.am/vahanyan/articles/scandinavia-ru.pdf>

² Քաղաքակրթության պատմության մեջ նրա կողմից առաջին անգամ կիրառվել է թվերի և այբբենական նշանների հարաբերակցության մեթոդը (հեղ. նշ.): Ըստ փորձագետների՝ թվերի այբբենական նշանակությունները հրեաները փոխառել են հին հույներից (հավանաբար՝ Միլետից), ովքեր ստեղծել են այդ նշանակությունները դեռևս մ. թ. ա. VII դարում: Քանի որ ըստ հունական տվյալների՝ Կադմոսն է ստեղծել և հույներին փոխանցել գրի նշանները, կարելի է եզրակացնել, որ թվերի այբբենական նշանակությունները հույները նույնպես փոխառել են հին հայերից: Համեմատության համար նշենք այն փաստը, որ հայերեն լեզվում «տառ» և «տարի» հասկացություններն ունեն ընդհանուր տառային կառուցվածք: Անանիա Շիրակացին նշում է, որ իր նպատակն է ներկայացնել մեր նախնիների կատարած աշխատանքը՝ թվաբանության արվեստը՝ որպես բարի ուսուցչի կենդանի ձայն: Նա հորդորում է սովորել իր աղյուսակների հիման վրա, սակայն և նշում է, որ դրանք միայն համառոտ են. Ներկայացված է քիչ մասը այն բազմաթիվից (Ա. Աբրահամյան, Գ. Պետրոսյան. Անանիա Շիրակացի, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 1970, էջ 46): Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ տառային և թվային հարաբերակցման կիրառմամբ Շիրակացու բազմապատկման աղյուսակները շուրջ յոթ դար ավելի հին են մաթեմատիկայի պատմության մեջ մինչ այդ հայտնի նմանատիպ այլ աղյուսակներից (նույն տեղում, էջ 56):

տարեցույցը, որտեղ ամիսները կրում էին **Հայկի** զավակների և դուստրերի անունները³:

Փյունիկիայի և **Կիլիկիայի** հին տարածքները ժառանգական տիրապետության են փոխանցվել Կադմոսի ժառանգներին (Հ. Դրասխանակերտցի): Հերոդոտոսն արդարացիորեն նշում է, որ Կադմոսը Հունաստան է եկել **Փյունիկիայից**: Հերոդոտոսը նշում է նաև, որ Ասիա գաղթած փյունիկյան (կամ Թրակիայի) ցեղերից մեկը խոսում էր հայերենին (կամ Տիրի և Կադմոսի լեզվին⁴) նման մի լեզվով: Կադմոսի անվան հետ է կապված ոչ միայն լեգենդար Թեբե (Հունաստան) քաղաքի կառուցումը, այլև «**կադմիում**» (պղինձ) քիմիական նյութը և «**ակադեմիա**» եզրույթը:

Կադմոսին հայտնի էին ոչ միայն **հին աշխարհի** հնագույն **փիլիսոփայությունը**, նա նաև տիրապետում էր **գաղտնագրերի** և **գրի** (հիերոգլիֆային, գաղափարագրային և պատկերագրային) արվեստին: Հիմնավորվել է, որ հնագույն Հայաստանի ժայռապատկերներում տեղ գտած նշանների արխետիպերը նախատիպ են հանդիսացել **Հին Եվրոպայի Ստարչևեվո** և **Վինչ** մշակույթների նշանների համար: Կադմոսը առաջին ուսուցիչը դարձավ, ով գրի ունիվերսալ համակարգը՝ այսպես կոչված դանիելյան գրերի նշանները, հարմարեցրեց այս կամ այն լեզվին՝ օգտագործելով բնափիլիսոփայության և մետաֆիզիկայի կոնցեպցիայի՝ հին հայկական աշխարհայացքի հարացույցը: Հայտնաբերվել և հիմնավորվել է, որ փյունիկյան (արամեական, հիքսոսական) գիրը, հայկական և հունական այբուբենները ձևավորվել են վաղ աշխարհայացքային կոնցեպցիաների հիման վրա (Ս. Բաբայան), և որ ժամանակակից հայոց այբուբենը կանոնավեր մաթեմատիկական մոդել և կոդավորված համակարգ է (Գ. Պողոսյան): Ավելի վաղ առաջարկվել է մի վարկած, համաձայն որի հին հայկական երաժշտագրության նշանները՝ խազերը, կապված են բնափիլիսոփայության սկզբունքների և բնական թվի պլատոնական շարքի հետ (Ն. Արոյան)⁵:

4. **Չքնաղ Եվրոպան՝ փյունիկյան արքայադուստրը և Կադմոսի քույրը**, առևանգվում է հույների կողմից (ըստ դիցաբանության՝ Ջևսի կողմից) Ասիայից: Կիպրոսում նա Մինոս (կամ Մինաս) անունով որդի է ծնում, ով դառնում է Մինոսյան քաղաքակրթության⁶ հիմնադիրը և հին Կրետեի մայրաքաղաք Կնոսոսի լեգենդար արքան: Մինոսը հիմնադրում է Կնոսոս, Փեստոս և Կիդոնիա քաղաքները: Հայտնի է **Փեստոսյան սկավառակը**

³ Մովսես Խորենացի. Հայոց պատմություն, թարգմանությունը գրաբարից՝ Գ. Սարգսյանի. «Հայաստան», Երևան, 1990. Հ. Դրասխանակերտցի. Հայոց պատմություն, թարգմանությունը գրաբարից՝ Մ. Դարբինյան-Մելիքյան, Երևան, 1984.

⁴ Հեղ. ծան.

⁵ Աղբյուր. <http://www.iatp.am/vahanyan/articles/xram-znaniy-vahanyan-2016.pdf>

⁶ Էվանսի հայեցակարգում մինոսյան քաղաքակրթությունը նախահունական առաջին գիր ունեցող քաղաքակրթությունն է Կրետե կղզում և մայրցամաքային Հունաստանում: Էվանսի տեսակետը վիճարկում է Վիլյամ Ռիդթուեյը. նա Մինոսին դիտարկում է որպես հունական երկիր ներխուժած եկվորների ներկայացուցիչ, այլ ոչ թե՛ կղզու բնիկ բնակիչ: Աղբյուր. <https://ru.wikipedia.org/wiki/Миннос>

Կրետե կղզուց, որի վրա արձանագրված գրերը դեռևս չի հաջողվել վերծանել⁷:

5. **Ոսկե գեղմը** (ռունագրերով գաղտնագրված հնագույն գիտելիքները, որոնք պահվում էին **Կողքիսում**՝ Հայաստանին սահմանակցող Սարմատիայում) ոչխարի ոսկե մորթի է, որը դարձավ կոլխերի բարեկեցության մոզական առհավաստյան: Վիշապը պահպանում էր այն Արեսի պուրակում, որտեղից արգոնավորդները Յասոնի գլխավորությամբ առևանգում և տեղափոխվում են այն Հունաստան: Համաձայն հին հունական դիցաբանության՝ Ոսկե գեղմը խոյի ոսկե մորթի է (նուդարկված ամպերի աստվածուհի Նեփելեի կողմից, կամ Հերայի հրամանով՝ Հերմեսի կողմից, կամ հենց Ջեսի կողմից), որի վրա Ֆրիկսը և Հելլան ճանապարհ են ընկնում դեպի **Ասիայի** ափեր (հայտնվում են **Կողքիսի** ափին՝ Ասիան Եվրոպայից բաժանող հնագույն սահմանին)՝ փորձելով խուսափել իրենց խորթ մոր՝ **Կադմոսի** դստեր **Ինոյի** հետապնդումներից: Ֆրիկսը ժամանում է առասպելական «**արևելյան երկիր**»:

Բնափիլիսոփայության և մետաֆիզիկայի սկզբունքների մասին առաջին փիլիսոփայական ուսմունքը (ամրագրված «Վահագնի ծնունդը» դյուցազներգության մեջ), հին իմաստունների, **Կադմոսի** աշակերտների համակարգային աշխարհայացքը հիմք է հանդիսացել հին հույն փիլիսոփաների նախնական գիտելիքների և գրի տարբեր համակարգերի ստեղծման համար, որոնք միտում ունեին վերափոխել թաքնված գիտելիքները, ինչպես նաև հավաքագրել, պահպանել և փոխանցել այդ գիտելիքները: Հենց հնագույն գիտելիքները, որոնք Կադմոսի կողմից հունական այբուբենը ստեղծելուց և Ոսկե գեղմը Կողքիսից առևանգելուց հետո թարգմանվեցին հունարեն, դառնալով հույների ժառանգությունը, հնարավորություն տվեցին նրանց գերիշխել Եվրոպայում և Ասիայում ավելի քան հազար տարվա ընթացքում⁸:

6. **Աս Օդինը** համարվում է **սկանդինավյան ռունագրերի** ստեղծողը: Ըստ Սկանդինավյան դիցաբանության և Մնորի Ստուրլուսոնի՝ ասերը և վաները

⁷Ենթադրաբար մինոյան քաղաքակրթության միջին կամ ուշ բրոնզեդարյան դարաշրջանին պատկանող եգլի գրական հուշարձան, հայտնաբերվել է Կրետե կղզու Ֆեստոս քաղաքում: Դրա ճշգրիտ նշանակությունը, ինչպես նաև ստեղծման վայրը և ժամանակը ստույգ հայտնի չէ: Ըստ փորձագետների մեծամասնության՝ Ֆեստոսյան սկավառակի վերծանման իրական հեռանկար կարող է ստեղծվել միայն նմանատիպ գրի այլ հուշարձաններ հայտնաբերելու դեպքում: Ներկայումս Ֆեստոսյան սկավառակը գտնվում է Հերակլիոնի հնագիտական թանգարանում (Կրետե, Հունաստան): Հիմնական հատվածի հյուսիսային մասում՝ նույն մշակույթային շերտում, սկավառակից մի քանի դյույմ դեպի հարավ-արևելք, հայտնաբերվել է PH-1 գծային գրով տախտակի բեկոր (A. Pernier L. Il disco di Phaestos con caratteri pittografici - Ausonia: 1908. Vol. 3. Roma, 1909. p. 255-302): Տրոյական գրերը Գ. Շլիմանի արշավի ժամանակ հայտնաբերված տրոյական անոթների վրա նշված նշանների համակարգ է: Ըստ ռուս լեզվաբան և անտիկ դարաշրջանի պատմաբան Ն.Ն. Կազանսկու՝ նշանները նման են կրետեի գրերին: Գծային A գիրն իր բնույթով խառնուրդ է: Մոտ 80 նշան բաց վանկային է, իսկ մի քանի հարյուրը՝ գաղափարագրեր են (Н. Н. Казанский. Троянское письмо: к постановке вопроса // Античная балканистика. Карпато-Балканский регион в диахронии. М., 1984 г.):

⁸Աղբյուր. <http://www.iatp.am/vahanyan/articles/academy-cadmos2016.pdf>

եղել են սկանդինավյան աստվածներ, հնագույն ժամանակների առաջնորդներ և արքաներ: **Աս Օդինը** մեծաքանակ մարդկանց խմբով գաղթում է դեպի հյուսիս. ճանապարհին նրանց ընդունում են «ավելի շատ որպես աստվածների, քան թե մարդկանց»: Օդինը Ասքանագի (Թորգոմի եղբայր և Սարմատիայի տիրակալ) սերնդից է: Տիրից ժառանգած իր տունը Ասքանագը թողնում է Թորգոմին, ով հետագայում այն անվանափոխում է և կոչում Թորգոմի տուն: Հայկական ժայռապատկերներում տեղ գտած նշանները նախատիպ են հանդիսացել սկանդինավյան ռունագրերի ստեղծման համար: Ավելին՝ հայկական ժայռապատկերների նշանները ընկած են **Հին Եվրոպայի** (Ստարչեվո և Վինչ) մշակույթների նշանների «էթնոգենեզի» հիմքում:

7. **Դանիելյան գրերի** ծագման շուրջ պատմական գիտությունը տարբեր կարծիքներ է առաջարկում: Համաձայն Ի. Հարությունյանի առաջարկած վարկածի՝ դանիելյան գրերն ապացուցում են, որ հին հայերը հեթանոսական շրջանում ունեցել են նախնական այբուբեն: Գ. Աբրահամյանը հաստատում է այս կարծիքը՝ հղում կատարելով մի շարք պատմական աղբյուրների տեղեկությունների վրա: Համաձայն Ուդդափառ հանրագիտարանի՝ դանիելյան գրերը հանդիսանում են հայկական գրերի հայտնի ամենահին տարբերակը:

Հայոց արքա **Վռամշապուհը** տեղեկացնում է **Մեսրոպ Մաշտոցին** և կաթողիկոս **Սահակ Պարթևին**, որ Միջագետքում (Եդեսիայում՝ հայկական թագավորություններից մեկում, ուր հայոց արքա Աբգարը⁹ մի շարք տաճարներից արխիվներ է տեղափոխել) գտնվելու ժամանակ Աբել քահանան նրան հայտնում է ոմն սիրիացի եպիսկոպոս **Դանիելի** մասին, ում մոտ **հայկական գրեր** կային: Այդ Դանիելն իբր պատահաբար գտել է **հայոց լեզվի այբուբենի մոռացված հնագույն գրերը**: Սա լսելով՝ նրանք խնդրում են արքային սուրհանդակ ուղարկել Դանիելի մոտ՝ խնդրելով նրան բերել այդ գրերը: Մաշտոցի աշակերտ **Կորյունը** գրում է, որ մոտ երկու տարի Մաշտոցը դասավանդում էր՝ օգտագործելով այդ գրերը: Սակայն պարզվեց, որ դրանք բավարար չեն հայոց լեզվի ամբողջ հնչյունական կազմն արտահայտելու համար: Մովսես Խորենացին գրում է, որ Մաշտոցն անձամբ (աշակերտների ուղեկցությամբ) մեկնում է Միջագետք՝ Դանիելի մոտ, և չգտնելով այնտեղ ոչ մի հավելյալ բան՝ որոշում է անձամբ զբաղվել այդ խնդրի լուծմամբ: Որոշակի ժամանակ անհրաժեշտ սկզբունքը և տառերի գծագրությունը փնտրելուց հետո, Մաշտոցը ստեղծում է հայոց այբուբենը: Ուղղորդվելով այբուբենի ստեղծման հնագույն թաքնված սկզբունքներով՝ նա կատարելագործում է դրանք: Արդյունքում նա ստանում է յուրօրինակ, կատարյալ և ամբողջական այբուբեն ինչպես տառերի գծագրության, այնպես էլ հնչյունաբանության տեսանկյունից: Միջնադարյան հայ պատմիչ **Մովսես Խորենացին** հետևյալ կերպ է նկարագրում **Մաշտոցի** կողմից հայկական այբուբենի ստեղծման գործընթացը. «*Եվ տեսնում է (Մաշտոցը) ոչ այն է երագում, ոչ այն է արթմնի*

⁹ Հայտնի է Աբգար թագավորի և Հիսուս Քրիստոսի միջև նամակագրության մասին:

իր սրտի խորքում, հոգու աչքերին հայտնվող աջը, որ գրում է քարի վրա Ա, Ե, Ի, Ո, Ու: Քանի որ քարի վրա, ինչպես ձյան վրա, երևում էին տառերի հետքերը:»¹⁰.

Ըստ Ս. Մուրավյովի՝ Դանիելյան գրերի վարկածային աղյուսակում տողերը համապատասխանում են Արիստոտելի կողմից առաջադրված տարրերի (**հող, ջուր, օդ** և **կրակ**, որոնք կարող են ստացվել մեկը մյուսից) համար հնարավոր ամենակարճ հաջորդականությանը: Համաձայն Գ. Պողոսյանի տեղեկությունների՝ Մատենադարանի ձեռագիր մատյաններից մեկում **հայոց այբուբենի չորս այունյակները** (սկսած ձախից) անվանվում են համապատասխանաբար **կրակ, օդ, ջուր** և **հող**, որտեղ տարրերի հերթականությունը համեմատած նախորդի հետ հակառակ է: Սա կարելի է բացատրել նրանով, որ տողերը սլաքի ուղղությամբ 90 աստիճանով թեքելով՝ դրանց հերթականությունը փոխվում է հակառակ հաջորդականության: Այսպիսով՝ բնափիլիսոփայության և մետաֆիզիկայի սկզբունքները վերհանվում են ոչ միայն հայերի հեթանոս նախնիների գործերում, այլև Դանիելյան գրերի և հայոց այբուբենի (հայոց այբուբենը [V դար] բաժանվում է 4 կարգի՝ 4 տարրերի) կառուցվածքում¹¹:

8. Առանձնացվել են պատմական այլ տվյալներ, որոնք վկայում են այբուբենների ստեղծման պատմության վրա՝ հայկական ծագում ունեցող գիտնականների դերի և ազդեցության մասին: **Լևոն Մաթեմատիկոսի**¹² աշակերտներից էր պավոնների լուսավորիչ սուրբ Կիրիլը (աշխարհիկ անունը՝ **Կոնստանտին Փիլիսոփա**), ով Միֆոդիի հետ ստեղծեց հին **սլավոնական այբուբենը՝ կիրիլիցան**:
9. Ընդհանուր պատմական գիտության մեջ առավել լայն տարածում է ստացել նաև V-VII դարերի հայկական սկզբնաղբյուրների վրա հիմնված տեսակետը, համաձայն որի նշվում է **Մեսրոպ Մաշտոցի** հիմնարար դերը ինչպես առաջին աղվանական գրի, այնպես էլ առաջին վրացական գրի՝ մրգովանիի ստեղծման մեջ¹³: **Եթովպական գրերի** մի շարք նշաններ հիշեցնում են մաշտոցյան **հայկական գրերի** նշանները:

Նշված տվյալների ժամանակագրական վերլուծությունը ապացուցում է այն անվիճելի փաստը, որ հին հայերի քաղաքակրթությունը գերիշխող ազդեցություն է ունեցել հնագույն գրային համակարգերի ստեղծման, ձևավորման և կայացման պատմության մեջ:

¹⁰Աղբյուր. https://ru.wikipedia.org/wiki/%D0%94%D0%B0%D0%BD%D0%B8%D0%B8%D0%BB%D0%BE%D0%B2%D1%8B_%D0%BF%D0%B8%D1%81%D1%8C%D0%BC%D0%B5%D0%BD%D0%B0

¹¹Աղբյուր. <http://www.iatp.am/vahanyan/articles/nachala2014.pdf>

¹² **Լևոն Մաթեմատիկոս** (կամ **Լևոն Փիլիսոփա**) (մոտ 790 - մոտ 870 թթ.) – բյուզանդացի մաթեմատիկոս, 840—843 թթ. Մալոնիկի արքեպիսկոպոս: Կոստանդնուպոլսում Մագնավրի ավագ դպրոցի հիմնադիրն է: Մի շարք աղբյուրներ վկայում են նրա հայկական ծագման մասին՝ հիմնվելով նրա կենսագրական տվյալների վրա, որտեղ նա ներկայացվում է որպես պատրիարք Հովհաննես Քերականի ազգական:

¹³Աղբյուր. https://ru.wikipedia.org/wiki/%D0%93%D1%80%D1%83%D0%B7%D0%B8%D0%BD%D1%81%D0%BA%D0%BE%D0%B5_%D0%BF%D0%B8%D1%81%D1%8C%D0%BC%D0%BE